— Այստեղից ո՞ւր պիտի գնաք:

— Աղթամարայ վանքը, այնտեղի քանդակները տեսնելու համար:

— Հիանալի քանդակներ են, արժէ տեսնել:

Վարժապետը խոստացաւ, որ հէնց այդ գիշեր կը տայ պարոն բժշկապետին նրա ցանկացած տեղեկութիւնները, քանի որ նա այդպէս շտապում է:

Գիւղացիները, ինչպէս երեւում էր, իրանց վարժապետի վերաբերութեամբ մի փոքրիկ փառասիրութիւն ունէին. նրանք ուրախանում էին, որ իրանց վարժապետը այնքան հմտութիւններ ունի, որ եւրոպացին անգամ կարօտում է նրա տեղեկութիւններին: Բայց նրանք մի այլ բան եւս սպասում էին վարժապետից, որ նա կսկսէ եւրոպացու հետ մի ուսումնական վիճաբանութիւն եւ իր գիտութեամբ բոլորովին կշոարեցնէ եւ կը կաշկանդէ նրան: Այդ յաղթութիւնը ամբողջ գիւղին պատիւ կբերէ: Այդ դէպքում, գիւղացին նայում է իր վարժապետի կամ իր քահանայի վրայ, որպէս իր գիւղի քաջամարտիկ գոմէշի վրայ. երբ նա կռռի մէջ յաղթում է հարեւան գիւղի գոմէշին, ամբողջ գիւղը տօն է կատարում: Բայց այդ վարժապետը խիստ համեստ էր. նա վիճաբանութիւնների մէջ չմտաւ եւ չէր էլ ձգտում իրան ուսումնական ներկայացնելու: Նրա խօսակցութիւնն այնքան պարզ էր, այնքան ռամկական էր, որ կարծես երեխայութիւնից ծնոել, սնոել էր այդ լեռնականների մէջ: Բայց նոյն ռամկական պարզութեան մէջ երեւում էր մտքի եւ դատողութեան ուժ: Նա գիւղացիների փառասիրութեանը բաւականութիւն տոեց նրանով միայն, որ յետոյ սկսեց եւրոպացի բժշկապետի հետ նրա երկրի լեզոով խօսել: Թէեւ նրանցից ոչ ոք չհասկացաւ, թէ ինչ խօսեց. բայց ամէնքն էլ շատ ուրախացան, որ նա օտար լեզուներ եւս իմանում է: Նրանք միշտ սովորութիւն ունէին՝ միւս գիւղացիների մօտ իրանց վարժապետի մասին չափազանցութիւններ անելով պարծենալ, թէ «մեր վարժապետը տասն լեզու է իմանումէ:

Որտեղացի՞ էր նա, որտեղի՞ց էր եկել, — ոչ ոք չգիտէր: Նրանք այդքանը միայն գիտէին, որ առաջին անգամ, երբ յայտնոեցաւ, նա եւրոպական հագուստ ունէր: Յետոյ ամէն ինչ փոխեց, մինչեւ անգամ լեզուն եւս փոխեց, սկսեց նմանոել գիւղացիներին:

— Շա՞տ ժամանակ է, պարոն Ոստանիկ, որ այստեղ էք, — հարցրեց Ասլանը:

— Մի քանի տարի կը լինի, — պատասխանեց նա:

— Եւ այդքան ժամանակ ձեր հայրենիքը չէ՞ք գնացել: